

Հաշվետվություն

Արարատի մարզի Մրգավետ համայնքի ղեկավարի 2016թ-ի

երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքների

10.12.2016թ. Մրգավետի համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը վարում էր

համայնքի ղեկավար Լ. Աբրահամյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար՝

Ն. Կարապետյանը: Հանրային լսմանը ներկա էին համայնքապետարանի

աշխատակազմը, դպրոցի տնօրեն՝ Վ. Զոհրաբյանը, մանկապարտեզի վարիչ՝

Ն. Գևորգյանը, հայփոստի և բուժ. ամբուլատորիայի աշխատակցուհիները:

Լսեցին՝ Մրգավետ համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2016թ. դեկտեմբերի 10-ի

դրությամբ կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ երկրորդ կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները:

Համայնքապետարանում բնակչությունից ստացվել է 129 դիմումներ, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստի ժամանակ, և տրվել են համապատասխան լուծումներ:

2016թ. դեկտեմբերի 10-ի դրությամբ համայնքապետարանը բնակիչներին տվել է 419 տեղեկանք, ստացել 105 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

2016թ. երկրորդ կիսամյակի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները և փողոցները: Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել են հողամասի չափազրման, սահմանների ճշգրտման, հողամասերի փոփոխման և ձևակերպման աշխատանքները:

Նշվեց անապահով ընտանիքներին, հարազատին կորցրած անձանց անհատույց հատկացումներ կատարելու մասին: Համայնքի սոց. անապահով ընտանիքներին տրվել է 2.264.500 (երկու միլիոն երկու հարյուր վաթսուներուս հազար հինգ հարյուր) դրամ, հարազատին կորցրած անձանց տրվել է 100.000 (մեկ հարյուր հազար) դրամ ֆինանսական աջակցում, աղքատության աշխատանքների կազմակերպման հարցում հատկացվել է 990.000 (ինը հարյուր իննսուն հազար) դրամ:

Կառավարության կողմից մեր համայնքին անհատույց հատկացված ազդուական պարարտանյութը
և աշխանային սերմնացու ցորենը ամբողջությամբ ստացել և բաշխել ենք բնակիչներին:

Դեկտեմբերի 10-ի դրությամբ եկամտային մասով կազմում է 43.397.900 (քառասուներեք միլիոն
երեք հարյուր ինսուն յոթ հազար ինը հարյուր) դրամ, տարեկանի կտրվածքով կատարվել է
90%:

2016թ երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ
հարկատեսակների

- 1.Հողի հարկ – 4.550.000
- 2.Գույքահարկ –3.693.000
- 3.Տեղական տուրքեր –342.500

Դեկտեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը նախատեսվում է հավաքել

- 1.Հողի հարկ – 250.000
- 2.Գույքահարկ –110.000
- 3.Տեղական տուրքեր –0

Համայնքի ղեկավար  L. Արահամյան